

ԳԱՅԱՆՆ ԴՈՂՈՍՅԱՆ

Կենսաբանական գիտությունների թեկնածու

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԵՐԻ ՆԱԲՅՈՒ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Հայոց Այրուքեմի և հնչյունական համակարգի բուն բնագիտական վերամեկնաբանությունը սկսվում է XIII դարի հայ նշանավոր մատենագիր, հանրագիտակ վարդապետ Արևելցու «Մեկնութիւն քերականի» աշխատությամբ: Վարդապետ Արևելցին արդեն հոգու և մարմնի փոխհարաբերության միջնադարյան ըմբռնումների շրջանակում է գրում, որ տառը (հնչյունը) անմարմին է, որպես հոգին, և գիրը նրա նյութական արտահայտությունն է, որպես այդ հոգու թանձրացյալ մարմինը⁴⁰: Այնուհետև այս միտքը առավել էր խորացնելու Եսայի Նչեցի (1260-1338 թթ.): «Ի սկզբանէ էր Բանն» (Հովհ. Ա, 1) խոսքերի հետևողությամբ գրի և հնչյունի փոխհարաբերությունը նա այսպես է ներկայացնում. անմարմին ձայնը լեզվի և շուրթերի թաքսիմամբ հնչելով, այնուհետև մարմնավորվում է գրով: Ինչպես Նչեցին է ասում՝ «Անմարմին ձայնս, որ ի գրոյն տառ կոչի, որ ի բարբախմանէ լեզուին և շրթանցն յայլևայլ տեղիսս հանելով զանազան ձայնս՝ ծնանի զբանն»⁴¹:

Թրակացու քերականության հայերեն թարգմանությունում տառ բառը համեմատվում է տարր-ի հետ: Արևելցին այս միտքը զարգացնում է՝ գրելով, որ ինչպես չորս տարրերն են միմյանց հակառակ և նրանց զուգորդումից է կազմված նյութական աշխարհը, այնպես էլ բաղաձայնների և ձայնավորների զուգորդումից՝ տարբեր հնչյունները և բառերը⁴²: Արևելցին այնուհետև հռետորաբար հարց տալով, թե ինչի է նման քերականությունը, ասում է՝ մարդու, և բացատրում այսպես. «տառն ի հոգի և գիրն ի մարմին»⁴³:

Թրակացու քերականությունում բերվում են հունարենի ութ ձայնավորներ: Հայ մեկնիչները այս ութից հանելով օմեգան, նշում են յոթ ձայնավորներ: Արևելցին արդեն հոգևոր խորհուրդ է հաղորդում ձայնավորների յոթը լինելուն, ժամանակի մարդակազմական ըմբռնումների տեսանկյունից այն զուգահեռի մեջ դիտելով յոթ զգայարանների հետ: Ըստ Արևելցու՝ այս յոթ զգայարաններն են. «աչքն, ականջքն, քիթն, բերանն, շաշափականն, հոգին և մարմինն»: Այսպիսով, ձայնավորների և զգայարանների զուգահեռը յոթի խորհրդին հանգեցնելու համար Արևելցին հինգ զգայարաններին զումարում է նաև հոգին ու մարմինը⁴⁴:

Յոթ ձայնավորներ-զգայարաններ այս զուգահեռը առավել խորացնելով՝ գրում է. «Այս

* Սկիզբը փն՛ս նախորդ համարում, էջ 87-98:

⁴⁰ Վարդան Արևելցի, Մեկնութիւն քերականի, աշխարհափրոջամբ Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1972, էջ 84:

⁴¹ Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, աշխարհափրոջամբ Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1966, էջ 81:

⁴² Վարդան Արևելցի, Մեկնութիւն քերականի, էջ 85:

⁴³ Նույն փնդում:

⁴⁴ Նույն փնդում:

էթոն գիրս՝ թէ ունին լծակից և թէ ոչ՝ ինքեանք զիրեանց ձայնն կու բերեն և որպէս եթոն զգայարանքն աւզենն հոգւոյն, յոյնպէս և այս եթոն գիրս՝ քերական արհեստիս»⁴⁵:

Նույն այս համաբանությամբ հոգևոր խորհուրդ է հաղորդվում և ձայնավորների երկար, կարճ և երկամասակ լինելուն: Սկսյալ Թրակացոց՝ սսվում է, որ երկար, անընդհատ ձայնավորներն են է և օ-ն: Վարդան Արևելցին և հաջորդող շրջանի մեկնիչները այս երկու ձայնավորները անվանում են Աստվածային, քանի որ անընդհատ են, ինչպես որ Աստված է անվախճան. «Այս երկու գիրս աստուածայինք են, զի է-ն է արհմակ, որ միշտ է Աստուած, և ա-ն՝ գործոցն Աստուծոյ ի զարմացումն և ի տեսութիւն»⁴⁶:

Ո, Ե, Ի հնչյունները սուղք էին անվանվում, քանի որ ավելի կարճ են հնչում: Ահա այս պատճառով էլ Արևելցին այս հնչյունները անվանում է մարդկային, այսինքն նրանք մարդկային կյանքի մասն կարճ և սահմանափակ են:

Նույն ձևով, քանի որ Ա, Ի, Ը ձայնավորները իրենց հնչման երկակի տևողությամբ երկամասակ են անվանվում, Արևելցին դրանք անվանում է հրեշտակային, ինչպես որ հրեշտակները երկակի բնույթ ունեն՝ մարդկային ու աստվածային: Այսինքն, ինչպես երկամասակները միջանկյալ դիրք են գրավում երկար և կարճ ձայնավորների միջև, այնպես էլ հրեշտակները՝ Լստծո և մարդկանց միջև⁴⁷:

Բաղաձայնները շարաձայն են անվանվում, որովհետև իրենց ձայնը չունեն, բայց միանալով ձայնավորներին, դառնում են նոր հնչյուններ: Բաղաձայնների հնչմանը տալով մասն բացատրություն, Արևելցին այնուհետև կատարում է հետևյալ զուգահեռը. ինչպես որ երկիրը չոր և ցուրտ ձմռանն է ամուլ, սակայն առնելով խոնավություն (գիշություն) և ջերմություն՝ «պտղածին լինի», այսինքն պտղաբերում է, այնպես էլ բաղաձայններն են կերպավորվում ձայնավորների հետ զուգորդմամբ⁴⁸: Արևելցու այս համեմատությունը հիմնված է միջնադարյան այն ըմբռնման վրա, որ ջուրը և հողը իզական տարրեր էին, իսկ օդը և հուրը՝ արական⁴⁹:

Ձայնավորների, որպես հոգևորի ու աստվածայինի, և բաղաձայնների, որպես նյութականի ու մարմնավորի այս ըմբռնումները կրկնվում են նաև հաջորդող շրջանի քերականական մեկնություններում: Եվ մեկնությունից մեկնություն նաև հոգևոր առումով է շեշտվում ձայնավորների գերադասությունը բաղաձայնների հանդեպ: Այսպես, Եսայի Նչեցին գրում է. «Եւ արդ որոշէ զձայնատրքս ի բաղաձայնիցն իբրև պատուականս և պատճառս ձայնին յարմարման, քանզի ձայնատրքս են որպէս զգայութիւնք կամ հոգի կենդանական ի մարմնի»⁵⁰:

Նաև, թե՛ Գրիգոր Մագիստրոսը և թե՛ Հովհաննես Երզնկացին, Հովհաննես Ծործորեցին, Եսայի Նչեցին ու Առաքել Սյունեցին ձայնավորների շարքում առանձնացնում են է-ն, որպես աստվածային հնչյուն՝ է-ի մասն բացատրությունը կատարելով անտիկ ըմբռնումների և քրիստոնեական խորհրդաբանության իրար միախառնված զուգորդմամբ:

⁴⁵ Նույն վրեղում, էջ 86:

⁴⁶ Նույն վրեղում:

⁴⁷ Նույն վրեղում, էջ 86-87:

⁴⁸ Նույն վրեղում, էջ 88:

⁴⁹ Նույն վրեղում, էջ 88-89:

⁵⁰ Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, էջ 83:

Մագիստրոսը Է-ի մասին գրում է. «Իսկ Է-ն առանձին պարունակել եւ ոչ զոր. ո՛չ սկսեալ յունեքէ եւ ո՛չ աւարտեալ»⁵¹: Այսինքն, ի տարբերություն մյուս ձայնավորների, Է-ն երկբարբառների մաս չի կազմում և երկբարբառների ո՛չ սկզբից և ո՛չ էլ վերջից հանդես չի գալիս: Նկատի ունենալով Է-ի յոթ թվային արժեքը, շարունակում է. «Թիւս այս երթ-չի գալիս: Նկատի ունենալով Է-ի յոթ թվային արժեքը, շարունակում է. «Թիւս այս երթ-անեալ ասի կոյս, եւ ծնեալ զսա, ասեմ յուղղոյն Արամազդայ, զոր և ոմանք զԱթենայ անուանեմ, եւ ի բազմաց պատուեալ եղև ի հեթանոսականացն կոյս»: Այսպիսով, անտիկ շրջանի գրա բնորոշումներն են կույս լինելը և Աթենասի հետ համեմատվելը:

Յոթի հետ տարվող բնագիտական գուգահեռներից Մագիստրոսը հիշում է մոլորակների յոթը լինելը. «Եւ յաստեղաբաշխականն յաղագս եւթն վարչացն»: Մագիստրոսը անդրադարձնում է նաև յոթ թվի հաճախադեպ հիշատակությանը Հին Կտակարանում. «Եւ ըստ հրէականին եւթն ամն պատուեալ»:

Է-ն, լինելով յոթի թվային արժեքը, միաժամանակ աստվածությունն է խորհրդանշում, քանի որ Աստված Հին Կտակարանում քանիցս անվանվում է Է. «Ես եմ, որ Էմ» (Ելք Գ 14): Նաև այս պատճառով է բացատրվում այն հանգամանքը, որ մյուս տառերը եթե ունեն իրենց անվանումները՝ Այբ, Բեն, Գիմ, Դա, Եչ, Ջա..., ապա Է-ն կոչվում է հենց Է, որովհետև այն, ներկայացնելով աստվածության անվանումը, որպես տառ այլ անվանում չէր կարող ստանալ:

Մագիստրոսը իրեն բնորոշ խրթինությանը ակնարկելով Հայոց Այբուբենի աստվածապարզ և լինելը, ըստ երևութի մկատի ունի հենց ձայնավորների՝ Աստծո կողմից տրված լինելը, քանի որ ասում է, թե այս հնչյունը չէին կարողանում գտնել, և հետո Աստծո կողմից տրվեց. «Բայց ոչ գտեալ հնար մինչեւ յԱստուծուտ երեւեալ այսպիսի դասաորութեամբ զսա գտեալ»⁵²: Այնուհետև, մկատի ունենալով այս ձայնավորի անվանումը, գրում է. «Վասն որոյ և յաստուածայինսն իսկ դասաորի անուանակոչութեամբ, քանզի Է՛ միշտ»:

Հովհաննես Երզնկացի Պլուզը (1230-1298 թթ.) գրեթե բառացի հետևում է Մագիստրոսին Է-ին մկատի անվորված բացատրությունում⁵³:

Դարձյալ Մագիստրոսի հետևողությամբ, բայց մի քիչ ավելի հանգամանալից և պարզ է գրում Հովհաննես Երզնկացի Ծործորեցին (1270-ական թթ.-1338 թ.). Է-ն անվանելով նաև ազատարար և հանգստյան, մկատի ունենալով հրեաների եգիպտական գերությունից դուրս գալը, որը եղավ 50-րդ հոբելյան տարում, որը հավասար է յոթի քառակուսուն և հաջորդ տարին ազատությունը, ինչպես որ Հրեական պատերազմ է և ապա Մեծի Պահոց շրջանը: Հանգստյան ասելով էլ մկատի ունի կիրակին՝ յոթերորդ օրը, որը մկատված է Աստծուն⁵⁴:

Յոթ յոթերով կազմված հոբելյան տարու մասին գրել է նաև Հովհաննես Սարկավազ Իմաստասերը (1045-1050-ի միջև- 1129 թթ.): Հոբելյան տարին Սարկավազը այսպես է բացատրում «յեթն շաբաթս եթիցս եթ աւուրքք, որ լինի խԹ (49) և (1) ի վերայ բերեալ, որ

⁵¹ Լ. Խաչերյան, Գրիգոր Պաղիատուհի Մագիստրոս, Լու Անճելյու, 1987, էջ 394:

⁵² Նույն տեղում, էջ 395:

⁵³ Հովհաննես Երզնկացի, Հաւաքումն մակութեան բերականի, աշխ. Լ. Գ. Խաչերյանի, Լու Անճելյու, 1983, էջ 164:

⁵⁴ Հովհաննես Երզնկացի, Համառուպ տեսութիւն բերականի, աշխար. Լ. Ս. Խաչերյանի, Լու Անճելյու, 1984, էջ 166:

կոչի յոբելեան»⁵⁵:

Քերականական մեկնությունների շարքում է-ին և յոթին տրված ամենածավալում մեկնությունը կատարում է Առաքել Սյունեցին թվարկումների շարքը սկսելով է-ի աստվածային անվանում լինելու շեշտմամբ. «Ձի ասաց Աստուած «Ես եմ, որ է՛նն» (Ելք Գ 14): Եւ ի մատանի քահանային գրեալ էր յականն, թէ «է», այսինքն՝ Աստուծոյ անունն, զոր եղին ի վերա գերեզմանին Քրիստոսի մատնահար, զի ցուցցէ, թէ Աստուած է սա, որ ի գերեզմանին կայ ի ներքոյ անուանս այտորիկ: Եւ յետ գերութեանն տարաւ Նաբուգոդոնոսոր եւ եղ ի վերայ գլխոյ պատկերին, զոր տեսեալ հրոյն յետս ընկրկեցաւ եւ այրեաց զքաղղեացիս: Երկրորդ՝ զի է գիրն գերորդութիւնն Աշանակէ և ի մմանէ յառաջ եկեալն Անթիմ ծայրն եւ զլույսն ի վայր խոնարհեալ զՔրիստոս Աշանակէ՝ ի մեր բնութիւնս խոնարհեալ: Եւ միջին ստեղծումքն ի բնէն յառաջ եկեալ, Առնպէս զՈրդի և զՀոգի, որ ի Հարե յառաջ եկեալ: Դարձեալ՝ զի որպէս առանց ստեղանցն ոչ ասի, այսպէս, որք զՈրդի և զՀոգի ոչ դասանին՝ ոչ ունին զԱստուած»⁵⁶:

Որքան մեզ հայտնի է, միայն Սյունեցին է, որ է տառի գրաֆիկական գծագրումը համեմատում է Քրիստոսի խաչելության հետ՝ ասելով, թե այս տառի ներքևի վայր հակված մասնիկը խորհրդանշում է մեր փրկության համար խաչելության ժամանակ զլույսը վար հանած Քրիստոսին, իսկ այս տառի եռամասնիկ կառուցվածքն էլ խորհրդանշում է Սուրբ Երրորդությունը, և ինչպես որ այս տառի որևէ մասնիկը հանելով այլևս է տառը չի լինի, այնպես էլ Արամք, ովքեր չեն դավանում Որդուն և Սուրբ Հոգուն, Աստծուն չեն ընդունում:

Է-ի բացատրությանը նվիրված երկրորդ մասը Սյունեցին նվիրում է յոթի պարունակած խորհրդանշանների թվարկմանը. «Ի թուականացն պատուեալ էր է-ն եւ արեանկոյս անուանեալ, այսինքն ասէին, թէ է-ն յաստուածոցն ծնաւ, այսինքն՝ յԱրամագոյս գլխոյն, եւ վասն այս այն ասի կոյս, զի ոչ յարուէ եւ ոչ յիզէ է է-ն, որ է ժամանակն, զի միշտ է է: Եւ գերթն թիւն վասն այն կոյս ասացին, զի ի ներքոյ տասանցն, միայն է-ն է կոյս, որ ոչ լումեքէ ծնեալ է, եւ ոչ զայլն ծնանի, վասն որոյ պատուելի էր ի Աստուած և արեանկոյս անուանեալ: Չորրորդ, զի աստեղաբաշխքն գերթն թիւն պատուելին վասն երթն մոլորակացն, այսինքն՝ Երեւակն, որ է Չոհակն, Հրատն, Մուշթարին, Արեգակն, Չոհրայն, Աստարիտն, Լուսինն: Նոքա եւն միւթ Անցա իմաստութեանն եւ ի Անցա շարժմանէն լինին ազդմունք աշխարհիս: Հինգերորդ, զի Հին Արեւնքն երթն թիւն պատուեալ էր վասն երթն աւուր շարաթում, եւ վասն երթանց երթին, որ էր յոբելեան, այսինքն՝ ազատարար: Վեցերորդ՝ երթն թիւն պատուական է վասն երթն դար կենցաղոյս: Երթներորդ՝ վասն երթն խորհրդոյ եկեղեցոյ: Ութերորդ՝ վասն երթնարփեան շնորհացն Հոգւոյն Սրբոյ»⁵⁷:

Ինչպես տեսնում ենք, քերականական այս մեկնություններում առանձնացվում են ձայնավորները, որպես աստվածային գրեթե, և հատուկ խորհրդով է հաղորդվում Արամք յոթը լինելուն, և այս շարքում էլ առանձնակի պատիվ է ընծայվում է-ին, որպես աստվածային անվան և յոթի թվային համարժեք լինելուն:

Որպեսզի տեսնենք, թե ձայնավորների և յոթի այս ըմբռնումը ինչպես էր հետադարձ ընթացքով ազդելու հինգերորդ դարին հաջորդող հայ մատենագրության վրա, նորովի վե-

⁵⁵ Հովհաննես Իմաստասերի մարտնագրությունը, աշխ. Ա. Արրահամյանի, Երևան, 1956, էջ 229:

⁵⁶ Առաքել Սյունեցի, Յաղագս քերականության համառար լուծմունք, Լոս Անճելոս, 1982, էջ 103-104:

⁵⁷ Նույն տեղում, էջ 104-105:

րախմբագրելով Դանիելյան գրերի մասին Կորյունի և Խորենացու հաղորդած տեղեկությունները, ներկայացնենք նաև թվերի գործության և այլաբանական իմաստների պլուրազությունը և պլատոնական ըմբռնումները՝ դրանք հարաբերելով թվերի ու ի մասնավորի՝ յոթի մասին հայ մատենագրությունում առկա բացատրությունների հետ:

Թվերի մասին տարբեր պատկերացումները թեև ձևավորվել են մարդկության պատմության ամենավաղ շրջանից, սակայն դրանք համակարգված ձևով որպես ամբողջական տեսություն ներկայացնելը կապվում է Պլուրազորաս Սամոսացու (Ք.ծ.ա. 570-500 թթ.) և տեսություն ներկայացնելը կապվում է Պլուրազորականների հետ: Պլուրազորականությունը անվանելով թվերի փիլիսոփայություն, անտիկ փիլիսոփայության և գեղագիտության մեծ տեսաբան թվերի փիլիսոփայություն, անտիկ փիլիսոփայության և գեղագիտության մեծ տեսաբան Վ. Լուսը գրում է, որ Պլուրազորականները եղևում էին այն ըմբռնումից, որ գոյություն ունեցող ամեն ինչի հիմքում ընկած էր թիվը, և նրանք ամեն ինչ բխեցնում էին թվերից⁵⁸: Ըստ Պլուրազորասի, թվերում արտահայտվել է աշխարհի սկզբնական կարգավորվածությունը⁵⁹: Պլուրազորասը նաև ասում էր, թե Աստվածն է անճառելի թիվը⁶⁰:

Թվերի ոչ միայն որպես թվային միավորների, այլև որպես բանական աշխարհի հարաբերություններն արտահատող միավորների մասին Ա. Ստեփանյանը գրում է. «Դեռևս Պլուրազորասը և նրա հետևորդները մաթեմատիկական բաժանում էին երկու կարևորագույն հատվածի: Առաջինը գործառու էր, այսպես կոչված, բանական (կամ զգայելի) թվերով՝ միտված բացահայտելու զգայական աշխարհի քանակային հարաբերություններն ու համաչափությունները, երկրորդն, ընդհակառակը, գործառու էր մտընկալելի թվերով՝ նպատակ ունենալով վեր հանել բանական աշխարհի հարամնա էության կարևորությունները՝ համակարգված ըստ մեկ-բազումի համաչափության: Այս մտտեցմամբ՝ թիվը ներկայանում էր իբրև բանական գոյացությունների հոմանիշ»⁶¹:

Մեկ այլ հետազոտող էլ Աշուր է, որ, ըստ Պլուրազորականների, «Աստված համաշխարհային կարգի հիմքում դրել է թվերը: Ըստ այդմ, Աստված եզակին է, իսկ աշխարհը՝ բազմակին: Որպես բազմակի, այն կազմված է հակադրություններից, և այն, ինչ որ հակադրությունները միանության է բերում և տիեզերքում միավորում ամենայն ինչ, հարմոնիան է: Հարմոնիան աստվածային է և արտահայտվում է թվային հարաբերություններում: Ով մինչև վերջ կյուրացնի թվերի աստվածային այդ հարմոնիան, ինքը կդառնա աստվածային և անմահ»⁶²:

Թվերի՝ որպես ինքնակա էության ըմբռնումը մի նոր աստիճանի բարձրացրեց Պլատոնը (Ք.ծ.ա. 428-348 թթ.), որն այնուհետև շարունակեցին նորպլատոնականները, որոնց ուսմունքն էլ ընկած է թվերի այլաբանական իմաստների քրիստոնեական խորհրդարանության հիմքում:

Լուսը գրում է, որ Պլուրազորականների և պլատոնականների հետևորդությանը նոր-

⁵⁸ А. Ф. Лосев, История античной эстетики, Москва, 1980, стр. 12-13.

⁵⁹ Լուսյն րեղում, էջ 18:

⁶⁰ О. Н. Уляпова, Число в истории эстетического опыта, Научные доклады, Философские труды, Москва, 1986, но. 4-6, стр. 147.

⁶¹ Պլարինես, Էնեալոն, գիրք V, թարգմանությունը հին հունարենից, ուսումնասիրությունը և մեկնությունները Ա. Ստեփանյանի, Երևան, 1999, էջ XL:

⁶² Б. Л. Ван дер Варден, Пробуждающая наука, „Математика древнего Египта, Вавилона и Греции“, Москва, 1959, стр. 129.

մալատոնականները թվերը համարում են ոչ թե վերացական (աբստրակտ) տարրեր հաշվելու համար, այսինքն՝ ոչ միայն թվաբանական միավորներ, այլև ինքնուրույն և օբյեկտիվ (ինքնակա) սուբստանցներ, որոնք իրենց անվերջության համար համարվում էին ինչ որ անտեղ ավելի սկզբնական, քան ինքը գոյը (լինելությունը) և զաղափարները, որի համար անորայատոնականները դրանք անվանում են վերգոյական (hyperoysioi) միավորներ⁶³:

«Թվերի մասին» անվամբ մի տրակտատ ունի անորայատոնականության հիմնադիր Պլոտինոսը (205-270 թթ.): Ներկայացնելով թվերի Պլոտինի ըմբռնումը, Լոսերը գրում է, որ նա միտոսարիվում է թվերի առջև, նրանց համարում աստվածներ⁶⁴: Լոսերը նաև գրում է, թե ըստ Պլոտինի, մտածողությունն իսկ խարսխված է թվերի վրա, քանի որ մտածողության ամեն մի արտահայտություն մի հասկացությունը տարբերակում է մյուսից, հարաբերում է մեկը մյուսի հետ, միավորում կամ նույնացնում է, և այս ամենը արտահայտվում է թվային տարբերակվածության միջոցով⁶⁵:

Պլոտինը թվերին նվիրված իր տրակտատում⁶⁶ գրում է, որ թիվը սկիզբն է, մերձ նախակզբին, թիվը էությունն է և հոգին է թիվը⁶⁷: Պլոտինը անգամ այն միտքն է հայտնում, որ թիվը անեղծում է գոյը⁶⁸, որի համար Լոսերը գրում է, թե Պլոտինի մոտ թիվը «բարձր է գիտակցությունից և էությունից, այն համարյա թե ինքը Միակն է»⁶⁹: Այս ըմբռնումների զարգացումը Պլոտինին հանգեցնում է այն մտքին, որ թվերի աշխարհը աստվածայինի աշխարհն է:

Սկսած դարձյալ մարդկային պատմության վաղ շրջանից և Պյութագորականներից, թվերի ուսմունքում էլ իր հերթին առանձնակի տեղ է տրվել յոթին: Հնագիտական պեղումների ընթացքում հավաքված նյութերի հիման վրա Բ. Ֆրոլովը գրում է, թե Պյութագորականների այն միտքը, որ ամեն ինչ թիվն է (все есть число), սկզբնապես ունեցել է ամեն ինչ, յոթ թիվն է (все есть число 7) իմաստը⁷⁰:

Նույն ձևով Վ. Ռաբինովիչը այքիմիայում առկա ծիսա-մոգական բանաձևերի հիման վրա գրում է, որ յոթը արտահայտում է մարդու հարմոնիկ վերաբերմունքը աշխարհին, և որ յոթը խորհրդանշում է բացարձակը և որ յոթ թվի հաճախադեպ հանդես գալը ամենատարբեր կոնտեքստներում արխետիպային մտածողության արտահայտություն է, որը դրսևորվել է շատ ժողովուրդների վաղ շրջանի մշակույթում⁷¹:

Այս իրողությունը հավաստելով նաև հնագիտական քննությունների արդյունքով, Ֆրոլովը գրում է, որ յոթ թվի հատուկ «մոգական» նշանակության մասին ամենատարբեր ձևերով արտահայտված պատկերացումները, կապված բնության երևույթների ու մարդկային

⁶³ А. Ф. Лосев, Самое самое, стр. 176.

⁶⁴ Նույն պեղում, էջ 290:

⁶⁵ Նույն պեղում, էջ 486-487:

⁶⁶ Плотин, О числах, ուսմունքն թարգմանությունը փնն հնարյալ գրքում. А. Ф. Лосев, Самое самое, Москва,

1999: Այս փրակտիկայի վերլուծությունը փնն նույն գրքի «Диалектика числа у Плотина» բաժնում:

⁶⁷ Skn նշվ. աշխար., էջ 884:

⁶⁸ Նշվ. աշխար., էջ 875:

⁶⁹ Նույն պեղում, էջ 912:

⁷⁰ Skn Б. А. Фролов, Числа в графике плеолита, Новосибирск, 1974, стр. 130.

⁷¹ В. Л. Равинович, Алхимия как феномен средневековой культуры, Москва, 1979, стр. 105.

կյանքի հետ, գոյություն են ունեցել քաղաքակրթության ողջ ընթացքում⁷²:

Հին աշխարհում յոթի ունեցած բացարձակ նշանակության մասին է խոսում և այն հանգամանքը, որ շումերների մոտ յոթ թիվը ներկայացվել է այն նշանով, ինչ որ տիեզերքը⁷³:

Յոթին ընծայված այս կարևորությունը և գորությունը հնագույն հավատալիքների շրջանակում բացատրվում է լուսնային օրացույցով և լուսնի պաշտամունքով: Ինչպես հայտնի է, նախնադարյան մարդու համար երկնքում և երկրի վրա ընթացող պարբերական երևույթները ժամանակը չափելու միակ միջոցն էին: Արևի, երկրի և լուսնի հարաբերակցությունը վեր էր հանում առավել տեսանելի, ժամանակային միավորները, որոնցից օրերը հարաբերվում էին լուսնի ամսական փուլի հետ, իսկ տարին՝ արեգակի:

Արեգակի դիրքի հետ էին կապվում տարվա չորս եղանակները և ըստ այդմ արեգակային տարին, սակայն դրանք ժամանակային մեծ միավորներ էին, այնինչ լուսնի ամսական փուլը ոչ միայն ժամանակային առավել փոքր միավոր էր, այլև այն իր հերթին կիսվում, ապա և չորսի էր բաժանվում լուսնի սկավառակի աճելով և նվազելով կիսվելու հետ: Այսպիսով, արևը տարեկան շրջանի հետ էր հարաբերվում, լուսինը՝ ամսական:

Լուսինը երկնային ամենամեծ մարմինն է, որը կարելի է երկնքից դիտել անզեն աչքով: Միաժամանակ երկնային լուսատուների մեջ նա առանձնանում է իր կրած ձևերի տեսանելի փոփոխությունների բազմազանությամբ: Լուսինը մեկ օրականից սկսելով աճել (բուրդել), այնուհետև նվազում է և 27 օր, 7 ժամ, 43 րոպե հետո վերադառնում է նախկին դիրքին: Այսպիսով, նորալուսինը տևում է 14 օր ու ևս 14 օր շարունակվում է կիսալուսինը: Առաջինում լուսինը աճում է մինչև ամբողջական սկավառակը, երկրորդում՝ նվազելով «վերանում», որպեսզի այնուհետև նորից ծնվի ամսական նոր շրջափուլում:

Նախնադարյան շրջանի լուսնային օրացույցում լուսնի 28-օրյա այս ընթացքը արտահայտվել է 28 միջերի երկու տասնչորսների բաժանմամբ, որոնք ներկայացրել են լուսնի աճող և նվազող սկավառակները և այս երկու տասնչորսներն էլ բաժանվել են երկու յոթերի, որոնք ցույց են տվել լուսնի թե՛ աճման և թե՛ նվազման հավասարաչափ ընթացքը, և լուսնի այս չորս ենթափուլերով են կազմվել լուսնային ամսվա չորս շաբաթները⁷⁴: Լուսնային շրջանի ենթափուլը եղող այս յոթը նաև գուգահետ է գծել յոթ մոլորակների և Մեծ Արջի համաստեղության յոթ աստղերի հետ՝ տիեզերագիտական առումով ևս ամրակայելով յոթի՝ որպես կարգավորիչի և բացարձակի ըմբռնումը:

Յոթի՝ որպես ժամանակաստեղծ թվի ըմբռնման պայմանավորումը լուսնի շրջանի յոթօրյա չորս ենթափուլերով, հավաստվում է նաև հայկական լեռնաշխարհի տվյալներով: Ինչպես գրում է Հ. Մարտիրոսյանը, ժայռապատկերներում և տարբեր առարկաների վրա «լուսինը պատկերվում էր մե՛րթ հազիվ երևացող կորագծի (նորոգ լուսին), մե՛րթ կիսամահիկի, մե՛րթ կիսաշրջանի (կիսալուսին), մե՛րթ երկու կիսաշրջաններից բաղկացած (միջնորմով անջատվող) սկավառակի ձևով (լիալուսին), մե՛րթ էլ՝ արևախաչի երկու կողմերից՝ երկու կիսալուսինների ձևով և այլն: Հասկանալի է, որ այս բազմազան պատկերները պետք է արտահայտեին ստույգ դիտվող լուսնի օրական ու շաբաթական փոփոխություն-

⁷² В. А. Фролов, *ibid.*, աշխար., էջ 127:

⁷³ Նույն փնդում, էջ 128:

⁷⁴ Նույն փնդում, էջ 120:

ները»⁷⁵:

Հ. Մարտիրոսյանը, մկարագրելով Գեղամա լեռների և Վարդենիսի ժայռապատկերները, գրում է. «Բոլոր նշված դեպքերում կրկնվում է երկնային մարմինների յոթ թիվը: Այսպիսի օրինակները կարելի է տասնապատկել այլ ժայռապատկերների հաշվին, սակայն զբերված փաստերն էլ աներկբայորեն հաստատում են, որ առասպելական սրբացված յոթ թիվը Հայաստանի մախարահիկների համար ի սկզբանե տրված մի կոնկրետ հասկացություն էր, մանավանդ, որ կապվում էր ոչ միայն յարևի, լուսնի և աչքով տեսանելի հինգ մոլորակների, այլև լուսնի քառորդի (յոթ օրական լուսնի) և համաստեղությունների հետ, որոնցով չափվում կամ անվանվում էին ժամանակի միավորները ամենավաղնջական էպոխաներում»⁷⁶:

Ժայռապատկերներում պատկերվել է նաև լիալուսինը, այն բոլորող 28 ճառագայթներով, որոնց համար Հ. Մարտիրոսյանը գրում է. «Եթե ճառագայթների այդ քանակը բաժանենք լուսապատկերի երկու հավասար շրջանակների վրա՝ կստանանք $2 \times 14 = 28$, այսինքն՝ մոռալուսնից մինչև կիսալուսին և կիսալուսնից մինչև լիալուսին ընկած ժամանակաշրջանը: Այդ երկու կիսամսյակներն էլ երկուսի բաժանելով կստանանք մկիրական յոթ թիվը»⁷⁷:

Լուսնի հետ կապված այս ըմբռնումները արտացոլվել են նաև հայկական տոմարագիտական աշխատություններում: Հակոբ Ղրիմեցուն փաստորեն հայտնի է եղել, որ սկզբնապես օրերի և ամիսների ընթացքը մարդիկ որոշել են լուսնի միջոցով: Ղրիմեցին գրում է. «Վարժեալքն տոմարին իմանան զել և զմուտ ամսոցն, իսկ անվարժքն՝ Լուսնին, զի Աստուած զԼուսինն անգիր տումար արարեալ է ոսմկացն և ախմարացն»⁷⁸:

Ղրիմեցին ևս նշում է, որ ամիսը որոշվում է լուսնի միջոցով, իսկ տարին՝ արեգակի. «Ջի որպէս Արեգակն զտարին կատարէ, մոյնպէս և Լուսնինն՝ զամիսն, զի ամիսն Լուսինն է, որպէս տարին Արեգակնն, զի հայելով ի Լուսինն, ստուգաբանեցին զանուն ամսոյն, ասելով. «Իմ ես պատկեր»⁷⁹: «Ամիս» բառի՝ որպէս թե *իմ ես* ստուգաբանության մասին մեկ այլ տեղում Ղրիմեցին գրում է. «Տեսանելով իմաստասիրացն զայսպիսի կիրս և զներգործութիւն Լուսնին, փոխանակեցին զԱյբ ընդ Ինու և զԻնի ընդ Եջի, որ ասէր «ամիս», սոքա ասացին «Իմ ես»⁸⁰: Այսինքն՝ *իմ ես* կապակցության ի-ն ա-ով է փոխարինվել, իսկ ե-ն ի-ով և դառել է ամիս:

Լուսնի փոփոխական ընթացքը մարդկային կյանքի հետ հարաբերելու և ըստ այդմ կատարված «ամիս» բառի ստուգաբանությունը գտնում ենք դեռևս Վանական վարդապետի (1181-1251 թթ.) «Յաղագս տարեմտի» գործում, ուր ասվում է. «Եւ տեսեալ զճա մարդիկ յընծաի եւ ի մաշիլ, ասացին, իմ ես արինակ ծնընդեսն եւ մահու»⁸¹:

Ինչպես ասացինք, թվերի այս խորհրդաբանությունը մոռալատոմարանության միջո-

⁷⁵ Հ. Ա. Մարտիրոսյան, Նախնադարյան Հայաստանի լուսնա-արեգակնային փոմարը, «Լրարեր հասարակական գիտություններ», Երևան, 1973 թ., հմ. 5, էջ 27:

⁷⁶ Նույն փնդում, էջ 29:

⁷⁷ Նույն փնդում, էջ 30:

⁷⁸ Հակոբ Ղրիմեցի, Տոմարագիտական աշխատություններ, աշխատասիրությամբ Վ. Էյնաթյանի, Երևան, 1987, էջ 175:

⁷⁹ Նույն փնդում:

⁸⁰ Նույն փնդում, էջ 211:

⁸¹ Լևոն Խաչիկյան, Աշխատություններ, հր. Ա, Երևան, 1995, էջ 183:

նի մասերից իշխանականը և առաջինը համարելով գլուխը, որպես բանականության կրողի, ամեն ինչ յոթի հանգեցնելու ճիգով վերջինիս համար էլ գրում է. «Եւթնեկին ծակոտեալ. երկու աչաւք և ականջաւք զուգիւք, երկու ոնգամբք և եւթներորդաւ բերանով»:

Ամեն ինչ յոթին հանգեցնելու նույն ձգտմամբ ասում է, որ յոթն են երաժշտության հնչյունները ըստ «Եւթնադի»՝ յոթնալարյա քնարի, յոթն են կետադրության նշանները և ձայնավորները. «Արդ ի բերականութեան՝ լաւագոյնք տառիցն, և որք ակելի զարութիւնն ունին՝ եւթն են թոտով ձայնաւորք»⁸⁹: Այսպիսով, յոթ ձայնավորների՝ սյուս գրերից գերադաս լինելու ըմբռնման աղբյուրներից մեկն է Փիլոնի այս ճառը:

Թվերի և հատկապես յոթի պարունակած այլաբանական խորհուրդներին Փիլոնը անդրադարձել է նաև «Ծննդոց գրքի» մեկնությունում⁹⁰:

Արդեն հինգերորդ դարում յոթ թվի մասին մանրամասնաբար գրել է Եղիշեն իր մի քանի գործերում: «Արարածոց մեկնութիւն» աշխատության մեջ նա գրում է. «Է՛ գիր, որ ձայնանան եւ բազմանան: Չի գործիք են բանի գիծքն, որ ի մեր լեզուս Լ, Զ լինի: Եւ ամեն տառից առաջին և հայր Այքն է, եւ առաջին ձայնաւոր և սկիզբն բոլորից թոտոց»⁹¹: Նույն այս գործում Եղիշեն նաև գրում է. «Եւթն թիւն սուրբ է եւ տաւն է ճշմարտին Աստուծոյ եւ խորհուրդ եւթն զարութեան՝ Հոգւոյն»⁹²: «Աստծո տոն» ասելով Եղիշեն նկատի ունի, որ շաբաթվա յոթերորդ օրը կիրակին է և այդ օրը նվիրում են Աստծուն: Նույն այս միտքը արտահայտված ենք գտնում «Մեկնութիւն Յեսուայ եւ Դատաւորաց» գործում, ուր Սամսոնի յոթ գիսակների բացատրությունում գրում է. «վեց ի նոցանէ զվեցօրեայ արարածքս նշանակէ, որ ի սկզբանէ, իսկ եօթներորդն՝ սուրբ, փափուկ, նուիրեալ Աստուծոյ օր, որ և անաշխատելի զօրութեան հանգիստ անուանեցաւ»⁹³:

Պատահական չէ, որ թվերի խորհրդաբանությանը առաջինը անդրադարձել է Եղիշեն: Ինչպես գրում է Սեն Արևշատյանը, Եղիշեն առաջին հայ մտածողն է, որի հայացքներում իրենց արտացոլումն են գտել նորալատոնական կոնցեպցիաները, թեև ենթարկված քրիստոնեական փիլիսոփայական-էսթետիկական ըմբռնումներին⁹⁴:

«Սակս բացայայտութեան թոտոց» վերնագրով թվերին առանձին մի աշխատանք է նվիրել Անանիա Նարեկացին: Այս գործի սկզբում ասում է, որ որևէ մեկը թող չմտածի, թե այստեղ բերված բացատրությունները են «վարկապարագի գիտ մտաց իմոց», այլ որ դրանք խարսխված են Հին և Նոր Կտակարանների վրա⁹⁵: Ասում է, որ թվերում ծածկված են աստվածային բարձրագույն խորհուրդները: Մտահոգվելով, որ իրեն կարող է մեղադրեն Պյութագորականներին և Պլատոնականներին հետևելու մեջ, ասում է, որ թվերի պարունակած աստվածային խորհուրդները այնքան պայծառ ու հստակ էին, որ անգամ հեթանոս փիլիսոփաները կարծեցին, թե «ի թոտոյ զոյանալ զաշխարհս»: Այնուհետև թվերի համար ասում է, որ «գոն ի սոսա խորհուրդք իմաստից աստուածային գիտութեանց»:

⁸⁹ Նույն տեղում, էջ 109:

⁹⁰ Տե՛ս Փիլոնի Եբրայեցոյ մնացորդք ի Նայս, աշխար. Ն. Մկրտիչ Անգերևանց, Վենետիկ, 1826, էջ 91:

⁹¹ Մարենագրութիւնք Նայոց, Անթիլիաս, 2003, հր. Ա, էջ 827:

⁹² Նույն տեղում, էջ 867:

⁹³ Սրբոյ Նորն մերոյ Եղիշի վարդապետի մարենագրութիւնք, Վենետիկ, 1859, էջ 190-191:

⁹⁴ С. С. Арсватян, Формирование философской науки в древней Армении, V-VI вв., Ереван, 1973, стр. 120.

⁹⁵ Ա. Ա. Արրահանյան, Շիրակացոյ մարենագրութիւնք, Երևան, 1944, էջ 237:

Մեկառնեկ ներկայացնելով թվերը, յոթի համար գրում է. «Իսկ սքանչելի թիւ Է-երորդիդ յոգնաթիւ ունի խորհուրդ»⁹⁶: Բազմաթիվ այս խորհուրդներից առաջինը նշում է տասի շրջանակում կույս լինելը, ապա Հոգու յոթ շնորհները և Արարչագործության թիվ լինելը:

Անանիա Նարեկացին ևս հատուկ շեշտում է յոթի ժամանակային միավոր լինելը. «Եւ սովին թուով ի կարգ անկեալ վարի աշխարհ, զի շաբաթք և ամիսք և տարիք սովաւ գոյացեալ երևին մեզ»:

Նա ևս թվարկում է մարդկային կյանքի՝ յոթով պայմանավորված շրջափուլերը.

ա. 7 օրում սաղմնավորվում է արգանդում

բ. 7-ամսյա պտուղը ծնվում է (Գրիգոր Տաթևացին խորհրդանշական է համարում ևս այն, որ վեցամսյա կամ ութամսյա ծնվածները չեն ապրում, իսկ յոթ ամսական ծնվածները ապրում են, որի համար յոթամսյա ծնվածներին անվանում է «շնորհաոր» ծնունդներ, հետևյալ բացատրությամբ «զի եօթն ամեայ ծնեալ մանուկն ապրի և ի շնորհաց լինի»)՝⁹⁷

գ. 7 ամսականից ելնում են՝ «ընծիւղին ատամունք»

դ. 7 տարեկանից փոխվում են ատամները և գիտակցականության «ընծայի տեսութիւն մտացն և երևութանան կերպարանք բանից յոգին: Վասն որոյ է ամեայ հրամայեն սոնով ի վարժս կրթութիւն դարձաց»⁹⁸:

Յոթի կույս լինելը և տարբեր երկրներում պաշտվելն է շեշտում Գրիգոր Մագիստրոսը՝ իրեն բնորոշ յոթիություններով. «Իսկ Հոմերոս, յԵլլադայ և յԵգիպտոս պատուեալ. յԱրամազդայ ակնարկութեւն ասէ զՈղոմպոս տատանեալ և զճա երկմի որդի, որպէս զԿոնոնոս հայր իւր, և պատուէ սա զԵօթնեակն կույս զճա իբրու զԱթենայ»⁹⁹:

Յոթի խորհրդաբանությունը իր յուրօրինակ բանաստեղծական մեկնաբանությունն է գտել Նարեկում: Գրիգոր Նարեկացին հույսը համեմատում է Աբրահամի հետ, ով առաջացած տարիքում ունեցավ Իսահակին, և Աննայի հետ, ով ամուսն լինելով, սակայն հավատով դիմելով Տիրոջը, ծնեց Սամուելին (Ա. Թագ. Ա. 17): Աբրահամի համար, որպէս բազում ազգերի հայր (Հոմ. Դ. 18), գրում է, որ «ի խորին ծերութեան անհամար որդոց հայր հաստատեցաւ», իսկ Աննայի համար ասում է.

Իսկ միւսն զանհանդերձելի երկիր որովայնին սենեկի

Եւթնեակ զաւակաւք բարգաւաճեցոյց,

Որ է թիւ մի անբաւութեան՝ զբնամն նշանակելոյ զԷութիւն,

Աստուածութեանն յարակայութեան սահման անհետազատելի

Եւ աւագանին նորածին որդւոց անհատ յորդութիւն:

Այս թիւ պանծալի, որում ո՛չ է կէտ կցորդի եւ ո՛չ սպառուած վախճանի,

Այլ կոյս ոմն է՝ ուրոյն ընտրութեամբ նուիրեալ յաւէտ

Անճառ վիճակաւ համայն յախտեմի,

*Դժուարաթարգմանելի մերոց իմաստից*¹⁰⁰:

⁹⁶ Նույն տեղում, էջ 245:

⁹⁷ Գրիգոր Տաթևացի, Գիրք բարոգութեան, որ կոչի Ամարան հարոր, Կ. Պոլիս, 1741, էջ 364:

⁹⁸ Ա. Ա. Աբրահամյան, Շիրակացու մարտնագրությունը, էջ 245:

⁹⁹ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, աշխ. Կ. Կոստանդնուպոլիս, 1910, էջ 182:

¹⁰⁰ Գրիգոր Նարեկացի, Մարեան ողբերգութեան, աշխարհափրությանը՝ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Երևան, 1985, էջ 370:

Այսպիսով, եթե Իսահակի համար Աբրահամին Նարեկացին անվանում է «անհամար թորոց հայր», ապա Ամնայի՝ որպես Սամուելի մոր համար ասում է «Եւթնեակ գաւակաք»։ Հատկանշական է, որ Հին Ուխտը խորհրդանշող Աբրահամի համար Նարեկացին օգտագործում է անհամար, իսկ Դավթի միջոցով Նոր Ուխտի հետ հարաբերվող Ամնայի համար՝ յոթը, որով այս թիվը Աստվածաշնչում ունեցած իր բացարձակ արժեքով ավելին է, քան անհամարը։ Նարեկացու իսկ բնորոշմամբ յոթը է «թիւ մի անբարութեան»։ Նարեկի այս հատվածի մեկնությունում յոթի պարունակած մեծ արժեքի մասին Հ. Գ. Ավետիքյանը գրում է, որ Սուրբ Գրքում «զեթթն թիւն առնու փոխանակ յոթնաթիւ բազմութեան»¹⁰¹։

Նարեկացին յոթը անվանելով պանծալի, ասում է, թե նրանում «ոչ է կէտ կցորդի եւ ո՛չ սպառուած վախճանի»։ Հակոբ Պատրիարք Նայյանը և Հ. Գ. Ավետիքյանը գրում են, որ այս խոսքերով Նարեկացին ցանկացել է ասել, որ Է-ն ո՛չ սկզբից և ո՛չ վերջից երկբարբառների մաս չի կազմում և որպես կոչյւ թիվ տասի շրջանակում ո՛չ ծնում է և ո՛չ էլ ծնվում¹⁰²։

Անհրաժեշտ է նաև նշել, որ Մատյանում Նարեկացին այլ առիթներով ևս քանիցս անդրադարձել է թվերի պարունակած այլաբանական իմաստներին¹⁰³։

Նկատի ունենալով Արարչագործության յոթերորդ օրը, վաճական վարդապետը յոթը անվանում է «հանգիստ Աստուծոյ» գրելով. «Եւթն, որ է հանգիստ Աստուծոյ, զի նա ի ներքոյ տասնեկին անծի՛ն է և անծնունդ. վասն այնորիկ պատուեն երայեցիք զեւթն, զվեցն գործեալ եւ յեւթն հանգուցեալ, որպէս վասն Աստուծոյ գրեալ է»¹⁰⁴։

Յոթի՝ որպես կոչյւ և Արամազդի թիվ լինելը, որի վրա է հիմնված նաև յոթի՝ որպես աստվածային թիվ լինելու ըմբռնումը, լավագույնս սակայն արտահայտվել է Դավիթ Անհաղթի մոտ. «Պարտ է զհտել, եթէ եւթն թիւդ կոչյւ լսի, որպէս Աթենայ և ժամանակ։ Եւ կոչյւ՝ վասնզի ամենայն թիւ ի ներքոյ տասնեկիդ ծնանի զոք կամ ծնանի յումեքէ, իսկ եւթն ոչ ծնանի զոք ի ներքոյ տասնեկիդ և ոչ ծնանի յումեքէ, որ զոն։ Երկուք ծնանի զչորս ի ձեռն բազմապատկութեան և երեք՝ զհինգ։ Իսկ չորք ծնանի յերկուց, և ծնանին զութ ըստ երկուց բազմապատկութեանց։ Նոյնպէս և հինգ ծնանի զտասն ի ձեռն երկուց բազմապատկութեանց։ Իսկ վեց ծնանի յերից ըստ նորին բազմապատկութեանց։ Իսկ ութն՝ ի չորից ըստ նորին բազմապատկութեանց։ Իսկ ինն՝ յերից ըստ երից բազմապատկութեանց։ Իսկ տասն ի հնգէ ըստ երկուց բազմապատկութեանց։ Իսկ եւթն թիւդ, որպէս յառաջագոյն ասացաք, ոչ ծնանի զոք և ոչ ծնանի յումեքէ ի ներքոյ տասնեկիդ։

Արդ այսպես և Աթենայ կոչյւ լսի վասնզի ասէին արտաքինքն զԱթենայէ, թէ ի գլխոյն Արամազդայ ծնաւ։ Իսկ ժամանակ կոչի, վասն զի և տղայք, ծնանելով վեցամսեայք և ութամսեայք ոչ ապրին, իսկ եւթնամսեայքն ապրին։ Եւ դարձեալ, վասն զի տղայքն բնատրեցան յեւթներորդ ամսեանն հանել ատամունս և յեւթն ամին փոփոխել»¹⁰⁵։

¹⁰¹ Հ. Գ. Ավետիքյան, Նարեկ աղօթից, Վենսիկ, 1827, էջ 158:
¹⁰² Տե՛ս Հակոբ Պատրիարք Նայյան, Գիրք մեկնութեան աղօթից Սրբոյն Գրիգորի Նարեկացոյ, Կ. Պոլիս, 1745, էջ 233 և Հ. Գ. Ավետիքյան, Նարեկ աղօթից, էջ 159:
¹⁰³ Այս մասին րև՛ն Հրաչյա Թամրազյանի «Գրիգոր Նարեկացին և Նոր Պլատոնականությունը (Երևան, 2004) գրքի «Պլատոնագործ-Պլատոնական թվի փիլիսոփայությունը Նարեկյան դպրոցի գիտա-գրական ավանդույթում» բաժինը, էջ 95-119:
¹⁰⁴ Լևոն Խաչիկյան, հյր Ա, էջ 182:
¹⁰⁵ Դավիթ Անհաղթ, Երկասիրությունք փիլիսոփայականք, համահավաք բնական բնագրերը և առաջա-

Յրթի աստվածային բնույթը, սակայն, արտահայտվում է տասնավորների շրջանակում գրաված իր դիրքով: Տասնավորների մեջ, այսպիսով, յոթը կույս և անտագոնի է համարվում, ինչպես որ անտագոնի է Աստված: Նման բնորոշումը, համաձայն որի, ոչ յոթն է ծնվում, ոչ էլ ծնում, պայմանավորված է յոթի հետևյալ հատկությամբ:

Մ'ացայլ բոլոր միավորները կա'ն բաժանվում են և կա'ն էլ բազմապատկվում տասի շրջանակում, որով նրանք կա'ն ծնում են և կա'ն էլ ծնունդ տալիս և միայն յոթն է, որ ո'չ բաժանվում է և ո'չ էլ գումարվում կամ բազմապատկվում:

Այսպես, մեկից ծնվում է երկուսը: Երկուսը թե՛ կիսվում է և թե՛ բազմապատկվում: Երեքից ծնվում է ինը: Չորսը թե՛ բաժանվում է երկուսի և թե՛ գումարվելով դառնում ութ: Հինգը ինքն իրեն գումարվելով ծնում է տասին: Վեցը կիսվում է երկուսի, ութը՝ չորսի: Ինը, ինչպես ասացինք, երեքի քառակուսին է և միայն յոթն է, որ ո'չ կարելի է կիսել և ո'չ էլ գումարել ու բազմապատկել տասի շրջանակում:

Ինչ վերաբերվում է այն հարցին, թե յոթը անտիկ աշխարհում ինչու է համեմատվել Աթենասի հետ, բացատրվում է նրա ծննդյան պատմության հետ տարված զուգահեռով: Հունական դիցաբանությունում ասվում է, որ Աթենասը Ջևսի և Մեդիտայի դուստրն էր: Ջևսը իմանալով, որ իր կինը հղիացել է և նրա համար ծնելու է մի որդի, որը նրան կզրկի իշխանությունից, կուլ է տալիս կնոջը, որից հետո գլխի սուր ցավեր է զգում և Հեփեստոսին (մի այլ դեպքում Պրոմեթեոսին) պատվիրում կացինով շարդել իր գլուխը, որտեղից և էլնում է Աթենասը ռազմական ամբողջական հանդերձավորմամբ:

Աթենասն էլ իր հերթին կույս է մնում, որի համար յոթ թիվը նրա հետ է համեմատվում, որովհետև Աթենասը ըստ էության չի ծնվել, այլ միանգամից էլ էլ է Ջևսի գլխից ու կույս է մնացել՝ ո'չ ծնել է, ո'չ էլ ծնվել: Նաև քանի որ-հերթանոսական գլխավոր Աստծուց էր ծնվել և ինքն էլ իմաստության և պատերազմի աստվածն էր, ուստի և յոթը համարվում է աստվածային թիվ¹⁰⁶:

Յրթի և ընդհանրապես թվերի խորհրդաբանությունը շեշտված ձևով արտահայտվել է նաև երաժշտագիտության բնագավառում: Ինչպես գրում է Վ. Ռաբինովիչը, Գրիգորյան երաժշտության յոթ ձայները համարվում էին զգայական արտահայտությունը համաշխարհային հարմոնիայի և ներդաշնակության¹⁰⁷:

Նաև դեռևս Անտիկ աշխարհից եկող ըմբռնմամբ աշխարհին և մարդուն դեկավարում է տիեզերական երաժշտությունը: Երաժշտության հետ է կապված այն ամենը, ինչ որ հոսում և փոխվում է աշխարհում: Երաժշտությունն էլ իր հերթին ենթարկվում է թվին: Ահա այս պատճառով և՛ մակրոկոսմոսում, և՛ միկրոկոսմոսում իշխում են թվերը՝ որոշելով տիեզերքի կառուցվածքը և ընթացքը¹⁰⁸:

Վան դեր Վարդենն էլ գրում է. «Երաժշտություն, հարմոնիա և թվեր- այս երեք հասկացությունները անխզելիորեն իրար էին կապված Պյութագորականների ուսմունքում»¹⁰⁹:

բանը Ս. Ս. Արևշապյանի, Երևան, 1980, էջ 82-83:

¹⁰⁶ Православная Энциклопедия, т. IV, Москва, 2002, стр. 82, վրևս նաև Мифы народов мира, Москва, 1980, т. I-ий, стр. 125-129.

¹⁰⁷ Տևն Բ. Լ. Равнинич, Алхимия как феномен средневековой культуры, стр. 105.

¹⁰⁸ Տևն Ա. Я. Гуревич, Категории средневековой культуры, стр. 73.

¹⁰⁹ Տևն Ван дер Варден, Провуждающая наука, стр. 129.

Թվերի խորհրդաբանությունը իր արտացոլումն է գտել նաև հայ միջնադարյան երաժշտագիտական մեկնություններում: Ինչպես գրում է Աննա Արևշատյանը, «Առհասարակ թվային խորհրդաբանությունը էական տեղ է գրավում երաժշտական տրակտատներում՝ ձեռք բերելով խորքային, արխետիպային բնույթ: Դրանցում անընդհատ հանդիպում են 4, 7, 8, 10, 12, 24 սրբազան թվերը»¹¹⁰:

Եկեղեցական խորհրդաբանությունը իր շեշտված դրոշմն է դրել ոչ միայն փիլիսոփայության, գեղագիտության և բնագիտության, այլև պատմագիտության վրա. երբ պատմության շարադրանքում պատմական շատ իրադարձություններ զուգահեռի մեջ են դիտվել Աստվածաձայնային տարբեր դրվագների հետ:

Կարծում ենք, նույն այս հանգամանքով է բացատրվում և այն հարցը, թե ինչու Կորյունից, Մովսես Խորենացուց և Ղազար Փարպեցուց հետո հաջորդող դարերում ստեղծագործած մի շարք հեղինակների գործերում ասվում է, որ իբրև թե Մաշտոցը ստեղծել է ոչ թե ողջ Հայոց Այբուբենը, այլ միայն յոթ ձայնավորները:

Արդ, ինչով է բացատրվում նախ 7-րդ դարում Տիրակացու ժամանակագրությունում և ապա 11-12-րդ դարերից մեկեն ընդհանրացող այս ըմբռնումը, որը պատմական-սկզբնաղբյուրային որևէ հիմնավորում չունի նախորդ շրջանի պատմագրությունում:

Նման մեկնաբանության միակ աղբյուրը, որը այսօր ևս գայթակղության քար է հայագիտության համար, Դանիելյան Աշանագրերն են: Կորյունը հստակորեն գրում է, որ Մաշտոցը համոզվում է, թե դրանցով չի արտահայտվում հայերենի հնչյունական ողջ համակարգը, ուստի և դրանք գործածական չեն հայերենի համար: Միջնադարյան բազմաստիճան գուգորդմամբ, սակայն, Դանիելյան գրերը նորովի են իմաստավորվում յոթի պարունակած այլաբանական խորհրդի շրջանակում: Ինչպես տեսանք, Թրակացու քերականությունում ձայնավորները ութն էին, և Թրակացու առաջին հայ մեկնիչները հայերենի համար ևս Աշուն են ութ ձայնավոր՝ օմեգայի համարժեքը համարելով աւ-ը: Հաջորդող դարերում, սակայն, ութ ձայնավորների փոխարեն Աշուն է յոթը, որը սակայն ավելի շատ պայմանավորված էր ոչ թե բուն հնչյունական համակարգի իրողություններով, այլ ձայնավորների թիվը յոթ դարձնելով և այդպես յոթի հոգևոր խորհրդին համապատասխանեցնելով: Եթե ձայնավորների որոշման հիմքում ընկած լինեք ձայնային հատկանիշը և ոչ թե յոթին համապատասխանեցնելու միտումը, ապա ձայնավորների շարքում չէր հիշվի Վյունը: Նոր շրջանի քերականությունում, որը խարսխված է հնչա-արտաբերական հատկանիշների և ոչ թե խորհրդաբանական տարբեր զուգահեռների վրա, Վյունը և վե՛լը արդեն ձայնավորներ չեն համարվում:

Ինչպես տեսանք, յոթ ձայնավորները մեկնությունից մեկնություն դիտարկվում են հոգու և մարմնի, Այութականի և աննյութականի հարաբերակցության շրջանակում, համաձայն որի, հոգին են ձայնավորները և մարմինը՝ բաղաձայնները: Այս ըմբռնումը միանգամայն նոր իմաստ է հաղորդում Դանիելյան գրերի մասին պատմությանը: Քանի որ, ինչպես Խորենացին է գրում, Հայոց գրերը Մաշտոցին տրվեցին աստվածային տեսիլով, ուստի դրանք պետք է համապատասխանեին իրենց աստվածատուր բնույթին, որի համարժեքն են ձայնավորները: Եվ, համաձայն ձևավորված այս ըմբռնման, աստվածատուր այս յոթ ձայնավորները կենդանացնում են Դանիելյան Աշանագրերը՝ այն դարձնելով Հայոց

¹¹⁰ Ա. Արևշատյան, Հայ միջնադարյան Չայնից մեկնությունները, Երևան, 2005, էջ 78:

Այբուբեն, ինչպես որ աստվածային շունչն է հոգի և կենդանություն հաղորդում նյութին և մարմնին:

Այս ըմբռնման ձևավորմանը կարող էր նպաստել և այն հանգամանքը, որ Փյունիկյան Այբուբենը, որ ընկած էր սեմական և հունական Այբուբենների հիմքում, կազմված էր 22 գրերից, ձայնավորներ չունեին և բաղկացած էր միայն բաղաձայններից¹¹¹: Նույն ձևով ձայնավորներ չունեին և հյուսիս-սեմիտական Այբուբենը¹¹²:

Այսպիսով, մեր կողմից առաջ քաշվող մեկնաբանությամբ 11-12-րդ դդ. մեր մատենագրությունում ընդհանրացող այն ըմբռնումը, որ Մաշտոցը ստեղծել է միայն հայերենի յոթ ձայնավորները, բացատրվում է յոթի և ձայնավորների պարունակած հոգևոր խորհրդով և ոչ թե այն ունի պատմական որևէ հիմք և կամ էլ խարսխված է պատմական թելուզ և մեզ չհասած որևէ վկայության վրա: Հատկանշական է, որ Մաշտոցի կողմից միայն յոթ ձայնավորները ստեղծած լինելու մասին ըմբռնումը մեր պատմագրության մեջ հայտնվում է այն շրջանից, երբ յոթը և ձայնավորները միջնադարյան ընդունված խորհրդաբանությամբ են ներկայացվում հայ քերականագիտությունում:

Ամհրաժեշտ է նշել, որ յոթ ձայնավորների այս ըմբռնումը ոչ միայն ընդհանրացել է հայ մատենագրությունում՝ սկսած 11-12-րդ դարերից, այլև իր հետադարձ ազդեցությունն է ունեցել նախորդող շրջանի պատմագրության վրա՝ այն փորձելով ենթարկել համապատասխան վերախմբագրման:

Այսպես, խորենացին գրում է, որ Մաշտոցին տեսիլում երևաց, թե ինչպես Աստվածային Աջը՝ վեմի՝ քարի վրա գրում է հայոց գրերը: Պատմահոր մի շարք ձեռագրերում, սակայն, հետագայում յոթ ձայնավորների ընդհանրացած ըմբռնմամբ «ի վերայ վիմի» խոսքերից հետո ավելացվել է «Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ի», որով այնպես է ստացվում, թե խորենացին գրում է, որ Աստվածային Աջով գծագրվել են միայն այս յոթ ձայնավորները¹¹³:

Այժմ տեսնենք, թե ինչպես Մխիթար Այրիվանեցու և Առաքել Բաղիշեցու զանձերում տող առ տող հստակորեն արտահայտվել է յոթ ձայնավորների այս խորհրդաբանությունը:

Այրիվանեցին գրում է.

*Վոսմշապուրի աւգնեայ, Վահրիճ գործակցեայ, Դանիէլ շնորհեայ,
Քսան և ինըն գրեայ, նախնեսցըն արարեայ, ամս երկու չհեզեայ*¹¹⁴:

Ինչպես տեսնում ենք, այստեղ Այրիվանեցին նույնությամբ գրում է ըստ Կորյունի և խորենացու, միայն թե Դանիելյան գրերի համար ասում է, որ նրանք 29-ն էին, որի համար էլ նրանցով գրելու երկու տարվա փորձերը արդյունք չստեղծեցին:

Ինչպես որ խորենացու մի շարք ձեռագրերում է որպես հետագայի հավելում ասվում, թե Աստվածային Աջով յոթ գրերը տրվեցին, այնպես էլ Այրիվանեցին է գրում.

*Մատամբ փորագրեայ, յարձանի դրոշմեայ, եթճ գիր յայտնեայ*¹¹⁵:

¹¹¹ В. И. Кацпржак, История письменности и книги, Москва, 1955, стр. 25.

¹¹² Д. Дьячигер, Алфавит, Москва, 1963, стр. 261.

¹¹³ Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, աշխատությանը Մ. Արևելյանի և Ս. Հարությունյանի, Տիֆլիս, 1913, էջ 327:

¹¹⁴ Մխիթար Այրիվանեցի, Գանձեր և փառեր, աշխատասիրությանը Է. Հարությունյանի, Երևան, 2005, էջ 113:

¹¹⁵ Նույն փնդում, էջ 114:

Քերականագիտական այն ըմբռնումը, որ ձայնավորները կենդանություն են հաղորդում բաղաձայնական համակարգին, Այրիվանեցին արտահայտում է հետևյալ տողով.

Անդ հոգի ջահեայ, զայլ գիրսն յարուցեայ, սիղորայք հեզեայ:

Այսպիսով, ձայնավորները որպես հոգի կենդանություն են պարզևում մնացյալ գրերին: Յոթ ձայնավորների այս խորհուրդը իր արտացոլումն է գտել նաև 15-րդ դարի հեղինակ Առաքել Բաղիշեցու՝ Թարգմանչաց նվիրված գանձում, որի՝ Հայոց Այբուբենին նվիրված հատվածը կարելի է համարել քերականագիտական աշխատությունների գրերին նվիրված բաժնի բանաստեղծական վերաշարադրանքը:

Բաղիշեցին գրում է.

*Քսան և իմն գիր էր գըրած,
Այլ անազ ուներ ընթերցողաց:
Ջի ոչ կապէր հէք բանից անանց,
Այլ անհոգի մարմնոյ ճըմանած¹¹⁶:*

Ահա այսպես դարձյալ շեշտվում է, որ այս քսանհինգ գրերը անհոգի մարմին էին: Աստվածային Աշով Հայոց գրերի արարվելը ևս Բաղիշեցին ներկայացնում է որպես յոթ ձայնավորների տրվելը.

*Աջն Աստուծոյ անեղին փառաց
Ըզեթըն գիրն ի քարին գրեաց:*

Արդեն գրական ընդհանրացող կանոնով Բաղիշեցին ևս գրում է, որ այս յոթ ձայնավորները

*Խտոնեայ ի յայլ գրերն առաջին
Սոքա հոգի ջահեցաւ անցին:*

Ահա այսպես ձայնավորների հնչյունական առանձնահատկությունները համապատասխան վերաիմաստավորման են ենթարկվել քրիստոնեական խորհրդաբանության շրջանակում և հարաբերվել յոթի պարունակած այլաբանական խորհուրդների հետ: Նման մեկնաբանությունը այնուհետև իր կնիքն է դրել և Հայոց գրերի գյուտի պատմության վրա՝ գրերի գյուտը ներկայացնելով որպես հոգևոր-աստվածային բնույթ ունեցող ձայնավորների արարում, որոնք այնուհետև կենդանություն են հաղորդել Դանիելյան մոռացված և անկենդան նշանագրերին:

¹¹⁶ Երևանի Մարենադարան, ձեռգ. հմր. 424, 183ա: